ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԵԱՆ ԿՇԷՌՔԻ ՆԺԱՐԸ ԹԷՔԻՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՕԳՏԻՆ: ՅԱՆՈՒՆ ԻՆՉԻ՞...

Կենտրոնական լրատուական միջոցները, վկայակոչելով Միութեան ղեկավար մարմիններին, վերջին ժամանակներս անընդհատ բարբառում են Հայաստանում իբր թէ ապօրինի զինուած կազմաւորումների առկայութեան եւ դրանց զինաթափման անհրաժեշտութեան մասին: Եւ քանի որ դա կայսերամիտ Կենտրոնի թելադրանքն է իր հլու կամակատարներին, ապա մէկ այլ բան հազիւ թէ հնարաւոր լինի սպասել նրանցից:

Բայց ահա, թէ ինչ են հաղորդում արտասահմանեան անհամեմատ իրազեկ ու ճշմարտացի, ազատ լրատուական միջոցները: Անցած գիշեր այսպիսի մի հաղորդում տուեց նաեւ «Ազատութիւն» ռադիոկայանի ռուսական ծառայութիւնը: «Քիչ առաջ ես տեղեկանք ստացայ ներքին զօրքերի նիւթատեխնիկական մատակարարման Անդրկովկասեան վարչութիւնից» - Մոսկուայից խմբագրութեանը հեռաձայնով յայտնում է նրա թղթակից Դմիտրի Վոլչակը: Ապա նա նշում է պաշտօնական փաստաթղթում պարունակուող յետեւեալ թուերը. ընթացիկ տարուայ Յունուարի մէկից սկսած Ադրբեջանին յատկացուել է 610 ատոմատ, Հայաստանին՝ ոչինչ, Ադրբեջանին՝ 462 ատրճանակ, Հայաստանին՝ ոչինչ, Ադրբեջանին՝ 20 հրացան, Հայաստանին՝ ոչինչ, Ադրբեջանին՝ 47 կարաբին, Հայաստանին՝ ոչինչ, Ադրբեջանին՝ հազար 150 զրահաբաճկոնակ, Հայաստանին՝ 50, Ադրբեջանին՝

մէկուկէս միլիոն մարտական փամփուշտ, Հայաստանին՝ 90 հազար:

Թուերն այդ, ինչ խօսք, ինքնին հասկանալի են եւ մէկնաբանելու կարիք չունեն: Մանաւանդ որ պարզից էլ պարզ է, թէ յանուն ինչի է այդքան ծանրաբեռնւում սպառազինութեան կշէռքի ադրբեջանական նժարը:

Աւելացնենք միայն Դմիտրի Վոլչակի պատասխանը միւնխէնցի իր գործընկերուհու՝ Իրինա Կոնեւսկայայի այն հարցին, թէ տեղի ունեցող իրադարձութիւնները, արդեօք ազգամիջեան կոնֆլի՞կտ են, թէ որպէս պատիժ՝ հայերի ազատասիրութեան: - Որպէս հայերի ազատասիրութեան պատիժ, - միանշանակ պատասխանում է թղթակից Վոլչակը եւ ապա աւելացնում, - ես դրանում առաջին հերթին մեղադրում եմ կենտրոնին եւ ապա Ադրբեջանին, որը հնազանդօրէն կատարում է Կենտրոնի հրամանները: